

տեաց խօսքերից, և առար տեղերում ուսանելով, ըստ կարի առաջադէմ են եղել, իսկ մնացածներ, որոնք Շխական Աւսումնարանում պարագելով փոքր ի շատէ բան սովորելու են, ամենեին ոչինչ յուսալ կարելի չէ, ընչու որ հայրեր, որոնք վարձք տալով իրենց որդիք Աւսումնարան են ուղարկում, նոքա պարտական են ամեն ժամանակ հսկել իրենց որդոց կեանքի վերայ. յորդորեն, ստիպեն, և ուսման յարզը զովելով շարունակեն իրանց որդոց երթեւելը. սրա հակառակ, նոքա ամեն գայլափոխում զատարկալանութեամբ կրամբասեն և կարհամարհնեն ուսմունք, հոգաբարձուի մի շնչին թերութեան համար, կանարգեն Աւսումնարան, և գեղջկական խոշոռ բառերով կ'մերժեն զրել կարդալ. երբ մէկը, եթէ պատահի, իր նախանձից շարժվելով կ'չարախօսէ ուսմուքի համար, նորան միաբանողներ անթիւ են. և աւելի ցաւալին այս վերջինը ստէպ տեղելք է ունենում զատարկ խօսակցութեանց մէջ այն փափկասիրտ իրեխիքանց կշտին ամեն ժամանակ այպանելով կրամբասեն ուսմունք, մի առանձին սառնութիւն կամ լսւ ևս ասել, ատելութիւն գեափի ուսմանք կ'ծնուցանեն և կ'օնուցանեն նոցա յիշողականաւթեան և սրտի մէջ. այս ամեն, իրենց տղիտութեան և անուսումնասէր բարուց դառն հետեանեներն են վերջապէս. եթէ հասարակութիւն ձանաչէ իր օգուտը և այն հիմնալիր բարելարաց սահմանադրութիւնը, բարեջան սրտով հաստատուն պահէ նորա հիմնալիր, քիչ տարիներից յետոյ պիտի տեսնէ անտարակցու նորա ներկայացրած մեծակշեռ գումարը, և զարմանալով ուրախանալու է:

Թողնելով ուսումնարանի արտաքին վարչութիւնը, ուղղահայեաց աչքով կ'նկատէի ներքին ուսումնական մասը, որ յիշեալ Պարոն Արամեանցի աշխատասիրութեամբ այնքան յառաջնութիւր ուսմունքը, որ իրօք Աշտարակու ոսկէդարն համարվելու էր զայն. վասն զի Աշխարհազրութիւնն, Աղջապին պատմութիւն, թուարանութիւն և ուրիշ առարկայք՝ Արամեանցի մատակարարութեամբ կ'ընդունէր ուսանողաց խումբը, մինչև ցայսօր Աշտարակում աւանդեալ ուսմունք էր, Սալմոն, Ժամադիրը, Շարական, և աւելի զերազանցն Քերականութիւն, և այս յետինն էլ մի մարդ զիտէր

կամ զժուարաւ երկու ւրեմն ըստ ասացելոյն, նա և այն իմաստութիւն է ձանաչել թէ յումեկ շնորհս. չեմ կարող զլանալ նորա ջանք և աշխատութիւն գէպի խր աշակերտներ, և իմ կողմից ձմարտութիւն անուբանալի է, առ այժմ այս համառօտ տեղեկութիւն իմ հայրենացս վրայօք թող բաւական համարուի, բարի ապագայի մը սպասելով:

Ա Հ Յ Ա Ր Ա Ա Վ Ա Կ Ա Յ Ա Ր Ա Յ

Ի 22^ն Փետրվարի 1871 թ.

Ա Ա Յ Ա Ր Ա Յ

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԵԱՅ

ԿՐԻԽԻՆ ՍԵՐԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱԴՆԵՐ:

Երկար ժամանակաց ի վեր՝ Ազուլեաց Հայալդի ժողովրդոց մէջը բնակելով՝ փոքր ի շատէ տեղեկութիւն ունեցանք նոցա բարցականապէս նպատակներին. յիրաւի գովութեան արժանաւոր է միանգամայն և նախանձելի նոցա մեծագոյն մասի արդի ունեցած ուսումնասիրութեան աղնիւ զգացմանքը, որոնք իրանց ունեցած նիւթական կարողութեան համեմատ ցանկանում են և իրանց հայրենաց որդոց բարցական և մտաւորական զարգացման. բաւական չը համարելով իրանց որդոց համար արական սեռի ուսումնարան՝ ապագայ սերնդի բարցագէտ, ուսեալ, և կրթեալ մայրեր պատրաստելու նպատակաւ՝ ունեցան և մի Օրիորդաց ուսումնարան. և այս ուսումնարանց հիմնական կերպով շարունակութեան համար՝ քանի ինչ հայրենասէր անձանց զոհաբերութեամբ հանգանակեցին իրանց միջից բաւական զրամագլուխ. և բացմանց հանդէսն էլ կատարեցաւ անցեալ 1867 ամի Հոկտ. 20-ին, մեր Վ. Ե. Համբառ. Տ. Գէղրդայ Պ. Արթազելագոյն Աամողուկոսի պատուական Կոնդակներով. և նոյն օրից սկսած՝ շարունակվում է մինչև ցարդ, բայց տարարադարար ամեն տարի զրեթէ մնթարկուած զանազան տեսակ մեթուսներով պաստու վարժապետների փոփոխութեանց առանց որ և իցէ հաստա-

տուն Պէտքածովի և հիմնաւոր կանոնների *). որոյ պատճառաւ և երրորդ դասատան փաքր ինչ առաջնակարգ և ուսևալ աշակերտները անցեալ տարի առանց աւարտելու իրանց ուսմանց առարկաները՝ հրաժարեցան ուսումնարանից, նմանապէս և օրիորդներից ոմանք. և ուսումնարանները փոխանակ օրէ ցօր յառաջաղիմութեան նշաններ ցոյց տալու՝ տարտամ ընթացքի մէջ է տեսնըլվում. (ասում են,) առ այս՝ շատերի տրտունջը բարձրանում է, և ավտոսում են իրը թէ, այնքան հազարաւոր մանէթներով եղած ծախսերին, որ մխրվում է տարէց տարի, որոնք կարօտարար սպասում էին չորս տարուան արդեանց. Եյսպիսի տարաբախտութիւններ բաւական չ'էր Եգուլեցոց համար, մին էլ տեսնում ես, Թաւրիղից մի դիմակաւոր Զօկ Զօհրապեանց ստորագրութեամբ յօդուած ։ Մեղու., լրազրի միջոցաւ հրատարակուած, ուր սկսում է ոմանց ականէ անուանէ ջատագովիլ, և ոմանց հասարակօրէն պախարակել, և զանազան անտեղի և անցարմար դատողութիւններ անել. այս դիմակաւոր Զօկի գէմն էլ ախոյեան է դուրս գալիս (գարձեալ ։ Մեղու., լրազրի միջոցաւ) Եզուլիսից՝ մի դիմակաւոր ուրիշ Զօկ Զօհրապեանց, որ միւս Զօկի ջատագովածներին պախարակում է, և պախարակածներին՝ ջատագովում է. դարձեալ անշիմն, և անշեռատես գատողութեամբ. որոնք փոխանակ կողմասիրական զրաբանութեան՝ կարող էին հետեւալ օգտաւէտ խորհուրդս հայրենասէր ու գով առաջարկել. Եգուլեցիք եթէ ցանկանում են իրանց ուսումնարանաց հիմնական և յարատերաբեկարդութեան, և սպասել ժամանակին նոցա արդիւնքներին, երեք տարու չափ թմու ունենան չափաւոր ոռնիկներով հասարակ ուսուցիչներ, և չափաւոր ծախսով կառավարեն՝ մինչև երեք տարի. և ամեն տարուայ սովորական ծախսից աւելացած գումարով՝ կարող են ընտրել իրանց հայրենակիցներիցը ուշիմ, բարեվարբ, և աշխոյժ նախկին աշակերտներից ոմանց, և յուղար-

(*) Թէեւ տարու է տարի հանդիսաւոր հարցարնութեան հանդիսներ ներկայացուցած են ի տես բազմաթիվ ժողովրդոց, իւ շատերին գարմացուցած:

կել բարձրագոյն ուսումնարաններում՝ սովորիլ կարեւոր ուսմաններ և լեզուներ, և զալ իրանց ուսումնարանաց մշտնշնական ուսուցիչ լինիլ *) (անտարակոյս չափաւոր ոռնիկներով). և այն ժամանակ էլ Տեսուչի, և Ուսուցիչների կարօտութիւն չեն ունենալ, և այն՝ շատ դժուարութեամբ որոնելով, չափազանց ոռնիկներ խոստանալով մի տարուան համար. նմանապէս և մշտնշնական ուսուցչուհի ունենալու համար՝ հիմնկուց պատաստն մի երկու համեստ և ուշիմ օրիորդներ, և ուր որ հարկն է սովորենել տան կարեւոր և օգտակար ձեռագործութիւններ, յօգուտ իրանց օրիորդական ուսումնարանին. Հարկաւ երեք տարուց յետոց՝ կունենանք ուսումնարաններ հիմնական կանոնագրութիւն, և հաստատուն Պէտքածոյ, որոնցմանիվ կը շարժանակեն իրանց ընթացքը խիստ զովելի և հիմնաւոր բարեկարգութեամբ, արժանինտիր հոգաբարձուների աղջասիրական հոգաբարձութեամբ, և իրանց հայրենակից բարեհան տեսչի, և ուսուցչոց աշխատասիրութեամբ, յարատե և միաձեւ ուղղութեամբ, ի պարծանս և յօդուտ Եգուլեցոց ուսումնակարօտ ժողովրդոց, :

ՄԵԿՐՈՊ ՎՐԱՀԱՆԿԱՅ ՓԱՀԱՊԵԼԱՆԿ

Խ 21 Փէտր. 1871:

Վ. Ա. Ա. Ա. Ա.

(*) Ամեն մի Հայութնակ բազմաց, իւ զիւղերի համար էլ կարեւոր է այս օգտակար տուաջարկութիւնը, այսինքն ունենալ իրանց հայրենակիցներիցը արժանաւոր բարեխիզմ ուսուցիչներ, զի նորա աւելի կարող են օգուտ բերել ուսումնարանի, բանթէ օսար երկիրներից եկածները. որոնցից ունանք իրեւ վարձիկան մշակ, չափիցն աւելի ստանում են իրանց վարձը, բայց արդիւնք ցոյց տալու անփոյն են (բացառութեամբ ոմանց),